

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-ԻՆ  
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

***Խորհրդի անդամներ՝***

|                  |   |
|------------------|---|
| Գ. Մինասյան      | ՀՀ ԱԺ պատգամավոր (համաձայնությամբ)  |
| Ա. Ղարիբյան      | ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական<br>(համաձայնությամբ)   |
| Տ. Դավթյան       | ՀՀ էկոնոմիկայի նախարար  |
| Դ. Դումանյան     | ՀՀ առողջապահության նախարար  |
| Դ. Սարգսյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար  |
| Պ. Սաֆարյան      | ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ   |
| Ռ. Մակարյան      | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ   |
| Ա. Ալավերդյան    | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտ-<br>ների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ  |
| Ի. Զարգարյան     | ՀՀ վարչապետի խորհրդական   |
| Լ. Հունանյան     | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտե-<br>սագիտական վարչության պետ   |
| Ռ. Հարությունյան | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի<br>տնօրեն  |
| Բ. Ենգիբարյան    | Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն<br>(համաձայնությամբ)  |
| Վ. Սաֆարյան      | «Հայրենական ապրանք արտադրողների միություն» ՀԿ-ի<br>նախագահ, ՀՀ հանրային խորհրդի ֆինանսատնտե-<br>սական և բյուջետային հարցերի հանձնաժողովի<br>նախագահ (համաձայնությամբ) |
| Ր. Մեխջյան       | «Հայաստանի Հանրապետության արտահանողների   |

|                  |  |
|------------------|--|
|                  | միություն» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)  |
| Մ. Հերզնյան      | «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)   |
| Ա. Գրիգորյան     | «Հայկական կոնյակագործների միություն» ԻԱՄ-ի նախագահ (համաձայնությամբ)   |
| Ա. Հարությունյան | «Հայ գինեգործների միություն» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)  |
| Ս. Բեկիրսկի      | «Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» ՀԿ-ի համանախագահ (համաձայնությամբ)                    |
| Ս. Զաքարյան      | «Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն (համաձայնությամբ)                    |
| Է. Գրիգորյան     | Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միության նախագահ (համաձայնությամբ)   |
| Ի. Քաուշ         | Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ) |
| Տ. Հարությունյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)  |

**Խորհրդի ռոտացիոն կարգով ընդգրկվող անդամներ՝**

|              |  |
|--------------|--|
| Ա. Սալաթյան  | «Նեյշնլ Ինստրումենտս Արմենիա» ընկերության տնօրեն (համաձայնությամբ) |
| Ս. Մաթևոսյան | «Լիկվոր» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)                            |

**Հրավիրվածներ՝**

|             |  |
|-------------|--|
| Ս. Տոնոյան  | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար |
| Հ. Միրզոյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության քաղաքականության վարչության պետ              |

- Ա. Հարությունյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
- Վ. Ասլանյան << կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար
- Լ. Շահրամանյան Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի թարգմանչուհի

1. Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին

-----  
(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն << Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի հաղորդումը՝ արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին:

2. Դեղագործության ու բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրի քննարկում և հաստատում

-----  
(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ դեղագործության ու բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրին.

2) հանձնարարել << Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ << ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել դեղագործության ու բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրի ֆինանսավորման աղբյուրների հետ կապված հարցը և արդյունքները ներկայացնել խորհրդի անդամներին:

3. Կոնյակագործության ոլորտի 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի քննարկում և հաստատում

(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ Կոնյակագործության ոլորտի 2012-2015 թվականների գործողությունների ծրագրին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

ա. իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել Կոնյակագործության ոլորտի 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի ֆինանսավորման աղբյուրների հետ կապված հարցը և արդյունքները ներկայացնել խորհրդի անդամներին,

բ. ՀՀ-ում գինեգործության և կոնյակագործության հումքային բազան պարզելու, անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ կատարելու (միջազգային լավագույն փորձին համահունչ), կոնյակագործության և գինեգործության ոլորտները հստակ սահմանազատելու նպատակով 15-օրյա ժամկետում, համապատասխան ենթաօլորտային խորհուրդներում, կազմակերպել փուլային քննարկումներ և արդյունքները ներկայացնել խորհրդի նիստի քննարկմանը:

4. Թեթև արդյունաբերության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մշակման առաջարկի քննարկում

(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

1) ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամանով հաստատել թեթև արդյունաբերության զարգացմանն ուղղված ենթաօլորտային խորհրդի անհատական կազմը.

2) համագործակցելով «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն Մ. Հերզնյանի և «Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» ՀԿ-ի ներկայացուցիչների հետ՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 31-ը՝ մշակել Թեթև արդյունաբերության արտահանմանն ուղղված

արդյունաբերական քաղաքականության ռազմավարության նախագիծ և այն ներկայացնել  
խորհրդի նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,  
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ